ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԳՈՅԱՏԵՎԱԾ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՐՑԻ ԱՌԹԻՎ

ԹԱԳԱԿԻՐ ԻՇԽԱՆԱՎՈՐԻ ՊԱՏԿԵՐԸ ԼՈՌԻ ԲԵՐԴԻ ԲՐՈՆԶԵԴԱՐՅԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻՑ

ՍԵԴԱ ԳԵՎԵՋՅԱՆ

Լոռի բերդի նախնադարյան բնակավայրը (Ստեփանավան քաղաքից 3 կմ հյուսիս-արևելք) գտնվում է դամբարանադաշտից ոչ հեռու, Միսխանա գետի ձախ ափի բարձրադիր սարահարթի վրա, որտեղ պահպանվել են քառանկյունաձև, հաստահեղույս պատերով կիկլոպյան կառույցների հիմքերը։ Բնակավայրում կատարված պեղումները ստուգողական բնույթ են կրել, ուստի մինչ այժմ ուսումնասիրված երեք տներից պեղվել է մեկական սենյակ։ Մշակութային շերտի հաստությունն այստեղ 20—50 սմ է, որտեղ խառը վիճակում հանդես են գալիս միջին, ուշ բրոնզի, վաղ երկաթի և երկաթի լայն տարածման ժամանակաշրջանի նյութական մշակույթի մնացորդներ։ Սրանց մեջ առկա են նաև ջնարակած խեցեղենի բազմաթիվ բեկորներ, որոնք վկայում են բնակավայրի գոյության մասին նաև միջնադարում։ Այս հին բնակավայրը, հավանաբար, Լոռե բերդաքաղաքի թաղամասերից էր։

Վերջին տարիներին պեղված № 3 տան կենտրոնում, մոտ 30 սմ հզորության մշակութային խառը շերտի մեջ, միջին բրոնզեդարյան շատ բնորոշ խեցեղենի շարքում, հայտնաբերվեց նաև սև փայլեցրած մակերեսով ու վարդագույն աստառով խեցու փոքրիկ բեկոր։ Սրա վրա փորագրված է մարդկային գլուխ՝ կիսադեմով, որը կրում է վեց սրածայր ատամներ ունեցող ցածր թագ։ Թագի վերևում կա եռաթերթ փոքրիկ շուշան. հնարավոր է, որ վերջինս լինի թագի կենտրոնում՝ գագաթին։ Ծոծրակից իջնում է ճակատին կապված ժապավենը, վիզը բարձր է, գծածածկ։ Քիթը ընդգծված է, կզակը՝ լայն (գուցե փոքրիկ մորուքով), շուրթերը թույլ են արտահայտված։ Բացառված չէ, որ կավամանի վրա պատկերված լիներ ոչ միայն մարդու գլուխը, այլև ողջ հասակով կանգնած անձնավորությունը՝ ծիսական որոշ կեցվածքով (նկ. 1, աղ., նկ. 1)։ Ակնհայտ է, որ մ. թ. ա. II հազարամյակի 1-ին կեսով թվագրվող սև փայլեցրած (հավանաբար՝ ծիսական) կավամանի վրա փորագրվել է մեծազարմ անձնավորության պատկեր։ Նա կարող էր լինել թագավոր, թագակիր իշխան, աստված կամ առնվազն քրմապետ։ Վերջինիս օգտին է վկայում, մանավանդ, թագի վրայի շուշանը կամ լոտոսի ծաղիկը, որը բնորոշ էր քրմական դասին։ Սա չի բացառում, սակայն, ազնվազարմ անձի գրված հասարակական-քաղաքական բարձր դիրքը։

Միջին բրոնզեդարյան հուշարձանների վրա մարդկային կերպարանքի պատկերումը պատահականություն չէ։ Այսպես, օրինակ, Թռեղքի նշանավոր դամբանաբլուրներից հայտնաբերված մետաղյա թանկարժեք սպասքի վրա կարելի է տեսնել տոնականորեն հանդերձավորված մարդկանց, որոնք ծիսական երթ կամ արարողություն են կատարում։ Նրանք նույնպես ներկայացված են կիսադեմով և դիմակավորված են։ Մեզ հետաքրքրում է, սակայն, Լոռի բերդի պատկերի գլխի հարդարանքը՝ թագը, սրածայր ատամներով և թագավորական ժապավենով։

Մ. թ. ա. II հազարամյակում, առաջավորասիական երկրներում, թեև ատամնավոր թագերը շատ տարածված չեն եղել, սակայն դրանք գործածվել են և իրենց նախատիպերն ունեն ավելի վաղ թվագրվող հուշարձաններում։ Հատկապես պերճախոս են Միշագետքի վաղ դինաստիական և ակկադական ժամանակաշրջանների գլանաձև կնիքները, որոնց վրա պատկերված առասպելական հերոսներն ու կիսաստվածները հաճախ կրում են ատամնավոր թագ կամ գլու-

խարկ (մ. թ. ա. 2750—2159, աղ., նկ. 2)[1]։ Միջագետքի երկրներում շատ տարածված են եղել հատկապես, այսպես կոչված, փետրավոր թագերը, որոնք երևում են մ. թ. ա. III հազարամյակից մինչև մ. թ. ա. I հազարամյակի կեսերը մանր և խոշոր քանդակագործական արվեստի հուշարձանների վրա։ Սրանք շատ մոտ են ատամնավոր թագերին և կարծես թե վերջիններս դրանցից են սերվել։ Սակայն մեր թագին շատ ավելի մեծ նմանություն ունեն Շոշից



հայտնաբերված գլանաձև կնիքի վրայի արական ու իգական աստվածների 5 կամ 6 ատամ ունեցող թագերը՝ ծոծրակին իջնող ապարոշով (մ. թ. ա. 2500, աղ., նկ. 3)[2]։ Ճակատամասում անկյունավոր զարդեր ունի վաղ բրոնզեդարյան կավե հենակի մարդակերպ քանդակը՝ հայտնաբերված Անտիոքից արևելք գըտ-

[1] В. К. Афанасьева, Гильгамеш и Энкиду, М., 1979, табл. VIIIв, табл. XIб. Տե՛ս նաև կից համեմատական աղյուսակը։

[2] E. Porada, Alt-Iran, Baden-Baden, 1962, S. 31, Fig. 13.

նըվող Թայինաթ գյուղի նախնադարյան բնակավայրի H շերտից (աղ., նկ. 4)[3]։ Ատամնավոր եզրերով բարձր գլխարկ է կրում նաև Միշագետքի մ. թ. ա. III հազարամյակի վերջի և III հազարամյակի սկզբի ռազմական առաջնորդը (աղ., նկ. 5)[4]։ Ատամնավոր թագերի տարատեսակներ են, այսպես կոչված, ճառագայթաձև թագերը, որ կրում են Թելլոյից հայտնաբերված նոր շումերական ժամանակաշրջանի կանացի արձանիկները (մ. թ. ա. III հազարամյակի վերջ,

Նկ. 1

II-ի սկիզբ, աղ., նկ. 6)[5]։ Մեզ հետաքրքրող թագերին համապատասխանող նմուշներ կարելի է տեսնել նաև էգեյան աշխարհում, որոնք ժամանակով էլ մոտ են Լոռի բերդի օրինակին։ Դրանցից է Կնոսոսի հին պալատից գտնված «կառավարիչի» պատկերով կնիքի դրոշմվածքը (աղ., նկ. 7), որ ներկայացնում է ատամնավոր թագով ու դիադեմով մարդու գլուխ (մոտ. մ. թ. ա. 1700 թ.)[6]։ Սրածայր, երկարավուն ատամներով է պսակվում նաև Միքենի շախտային դամբարաններից հայտնաբերված ոսկե դիադեման (մ. թ. ա. XVI դար, աղ. նկ. 8)[7]։

Ավելի կարևոր են, սակայն, խեթական զուգահեռները, որոնք ժամանակի, տերիտորիալ և մշակութային առումով սերտորեն առնչվում են Հայկական լեռնաշխարհին։ Հիթիթների կյանքի ու հավատալիքների բազմազան կողմերի բացահայտման համար անգնահատելի աղբյուր են դրանց պատկերաքանդակները։ Տվյալ դեպքում մեզ հետաքրքրում է մարդկանց ու աստվածությունների հանդերձանքը։ Ալիշարում հայտնաբերված խեթական անագե արձանիկների շարքում իշխող դասի ներկայացուցչի կամ աստվածուհու մի արձանիկ կա, որի

[3] R. J. Braidwood, L. S. Braidwood, Excavations in the Plain of Antioch, I, Chicago, 1960, fig. 290—2, 291, B—1.

[4] «История Древнего Востока», М., 1983, с. 321, рис. 94а.

[5] A. Parrot, Tello, Paris, fig. 49b, H.

[6] Н. А. Сидорова, Искусство Эгейского мира, М., 1972, с. 76, рис. 69.

[7] Նույն տեղում, էջ 165, նկ. 176։

գլխարկը ճակատամասում եզերված է սրածայր անկյունաշարով (աղ., նկ. 9)։ Արձանիկները թվագրվում են մոտավորապես մ. թ. ա. II հազարամյակի 1-ին կեսով[8]։ Ալաջա-Հույուքի բարձրաքանդակներից մեկում (մ. թ. ա. XIV դար)՝ թագավորն ու թագուհին տոնական, ծիսական հանդերձանքով կանգնած են ցուլի պատկերի առջև և զոհ են մատուցում (աղ., նկ. 10)։ Թագավորի ծիսական հանդերձի մասն է կազմում ատամնավոր եզրերով ոչ բարձր գդակը։ Նույն տոնական հագուստներով է պատկերված Թութխալիա IV թագավորը (մ. թ. ա. XIV դար) Շարումա աստծո գրկում՝ ցազբլը կայայի որմնաքանդակի վրա[9]։ Ըստ Արձինբայի, խեթական որոշ ծեսերի ժամանակ թագավորը հանդես էր գալիս աստվածության հանդերձանքով, հետևաբար կատարում էր նրա ֆունկցիան։ Կարծիք կա, որ Թութխալիա IV-ը, դեռևս կենդանության ժամանակ, պաշտվում էր իբրև աստված։ Աստվածների հագուստը, այսպիսով, դառնում էր հիթիթ թագավորների ծիսական զգեստը։ Արարողության ժամանակ քրմերն ու քրմուհիները գլուխները ծածկում էին իրենց հագուստի դույնի գլխարկով կամ կրում ժապավեն։ Հիթիթական հին բնագրերից մեկում ասվում է, որ նրանք պսակները հանելիս կապում էին սպիտակ ժապավեն և հագնում սպիտակ զգեստ։ Հագուստի գույնը և նյութը, որով այն պատրաստվել է, խեթերի մոտ ունեցել է սիմվոլիկ նշանակություն։ Մի այլ բնագրում ասվում է, որ թագավորի գլխարկի եղջյուրիկից կապել են կարմիր և սպիտակ բրդից հյուսված երիզ[10]։ Դա պարզ երևում է Ադանայի թանգարանում պահվող Փանջաուլիից հայտնաբերված բարձրաքանդակի վրա, որտեղ թագավորը պատկերված է սրբազան զոհաբերություն կատարելիս։ Նրա երկարավուն գլխարկի ստորին ու միջին մասում կապված են հյուսված երիզներ, որոնց ծայրերը ոլորված են և իջնում են մինչև ծոծրակն ու գոտկատեղը (աղ., նկ. 11)[11]։ Սաղավարտից իջնող և մինչև գոտկատեղը հասնող երիզ ունի նաև Խաթուշաշի Թեշուբ աստծո կամ թագավորի նշանավոր բարձրաքանդակը (մ. թ. ա. XIV դար, աղ., նկ. 12)[12]։ Ի դեպ, հիշյալ սաղավարտի բաղկացուցիչ մասը կազմող ստյուկալներն ու վրդկալը, ինչպես իրավամբ նկատում է Գ. Տիրացյանը, ավանդաբար փոխանցվել են աքեմենյան փոքրասիական սատրապների գլխարկներին և հայկական Արտաշեսյան հարստության թագավորների թագին (աղ., նկ. 20)։ Նա նշում է նաև, որ հայ թագավորները, ի տարբերություն աքեմենյանների, թագի վրայից կապում էին նաև ժապավեն կամ դիադեմա, որ հանգուցվում և կախվում էր ծոծրակից[13]։ Նման թագեր էին կրում նաև Ծոփքի թագավորները, որը հայտնի է ըստ մեզ հասած դրամների՝ սկսած մ. թ. ա. III դարից[14]։ Դիադեման կամ վարսակալը թագին հավասարազոր նշան էր համարվում. այն հանձնել՝ նշանակում էր հանձնել թագն ու թագավորությունը, իսկ վարսակալ կապել նշանակում էր թագավոր օծվել[15]։ Այստեղ տեղին է հիշել Հայաստանում կամ ընդհանրապես Անդրկովկասում հնագիտական պեղումների ժամանակ հայտնաբերված մետաղե զարդարուն և անզարդ ապարոշները (դիադեմաները), որոնց եզրերը ունենում են մանրիկ անցքեր՝ փափուկ հիմքի վրա (կտոր կամ կաշի)

---

8 В. Замаровский, Тайны хеттов, М., 1968, с. 55.

9 E. Akurgal, The art of the Hittites, fig. 84, 92. В. Г. Ардзинба, Ритуалы и мифы древней Анатолии, М., 1982, с. 49—50, рис. 3, 4.

10 Նույն տեղում, էջ 55—56։

11 „Studi Micenei ed Egeo-Anatolici", Fascicolo XVI, Roma, 1975, Tav. XIII.

12 E. Akurgal, Նշվ. աշխ., նկ. 64, 65, В. Г. Ардзинба, Նշվ. աշխ., էջ. 53, նկ. 6։

13 Г. А. Тирацян, Армянская тиара: опыт культурно-исторической интерпретации («Вестник древней истории», М., 1982, с. 90—93).

14 Բ. Ն. Առաքելյան, Ակնարկներ հին Հայաստանի արվեստի պատմության, Երևան, 1976, տախտ. LXVIII, LXIX։

15 Հ. Վարդան վ. Հացունի, Պատմություն հին հայ տարազին, Վենետիկ—Ս. Ղազար, 1923, էջ 61—65։

ամրացնելու համար։ Դրանք ծոծրակից կապվում են թելերով կամ ժապավեններով։ Հայաստանում ուշ բրոնզի վազ շրջանից հայտնի են Լճաշենի, Գեղարոտի և Արթիկի արծաթե ու բրոնզե[16], իսկ մ. թ. ա. VII—VI դարերից՝ Լոռի բերդի[17] ոսկե դիադեմաները։ Անդրկովկասում առայժմ հայտնի ամենավաղ օրինակը Կվացխելերիից հայտնաբերվածն է (մ. թ. ա. III հազարամյակ)[18]։

Միշագետքի մ. թ. ա. II հազարամյակի վերջի և I հազարամյակի սկզբի հուշարձաններում ևս երևում են նմանատիպ թագեր։ Դա Աշուրի ջնարակած աղյուսների վրա պատկերված աստծո թագն է (աղ., նկ. 13), որի վերին մասը օժտված է վեց երկարավուն ելուստներով[19]։ Սա ավելի մոտ է ատամնավոր թագերին, քան փետրավորներին։ Ավելի բնորոշ են նույն ժամանակի ասորեստանյան փղոսկրե սանրի վրա փորագրված թագերը՝ հայտնաբերված դարձյալ Աշուրից (աղ., նկ. 14)։ Այստեղ պաշտամունքային մի տեսարան է՝ աստվածուհու (գուցե Իշտար) և քմերի մասնակցությամբ, որը, հեղինակի կարծիքով, հավանաբար, կապվում է պտղաբերության և արմավենու ծեսերի հետ[20]։

Ինչպես տեսանք, Առաջավոր Ասիայում ատամնավոր թագերը գործածվել են տակավին մ. թ. ա. III հազարամյակից, իսկ Հայաստանում այն առաջին անգամ երևում է Լոռի բերդի բեկորի վրա։ Հայաստանի ավելի ուշ ժամանակաշրջանի հնագիտական հուշարձաններում նկատվող նմանատիպ թագերը վկայում են, որ դրանք դուրս չեն եկել գործածությունից, այլ փոխանցվել են ավանդաբար։ Հատկանշական են Աստղի բլուրից հայտնաբերված բրոնզե գոտու վրայի աղեղնավորների ատամնաձև սաղավարտները (մ. թ. ա. X—IX դարեր) և անհայտ վայրից գտնված քարե ֆալլատիպ արձանի թագը (մ. թ. ա. I հազ. սկիզբ, աղ., նկ. 15)։ Նույն ժամանակով է թվագրվում Շամիրամից հայտնաբերված քարե խոշոր արձանը, որի գլուխը դարձյալ պսակում է ատամնավոր թագը[21]։ Հետաքրքիր են Ներքին Դվինից հայտնաբերված քարե երկու արձանների գլուխները[22], որոնք թեև ուսումնասիրողները վերագրում են մ. թ. ա. I հազարամյակի վերջերին և մեր թվարկության առաջին դարերին, սակայն, թվում է, որ ավելի վաղ են։ Սրանց ատամնավոր թագերը զարմանալիորեն ձևավորված են ճիշտ այնպես, ինչպես վերևում ներկայացված խեթական անագե արձանիկինը։

Այս թագերի ու ժապավենների հետագա զարգացումն ու գործածությունը, ինչպես վերը նշվեց, արդեն երևում է աքեմենյան և արտաշեսյան ժամանակաշրջանների բազմազան հուշարձանների վրա։ Թագավորական ժապավեններ էին կապում հայոց Արշակունի և կիլիկյան թագավորները[23]։ Ըստ Հացունու, Տիգրան Մեծի թագը կամ ինչպես ընդունված է ասել, «հայկական թագը» սերվել է ոչ թե ժամանակակից օտար արքայական խույրերից, այլ Միհր աստծո թագից, որի պաշտամունքը տարածված էր հայոց մեջ, մանավանդ, որ հայ թա-

---

16 А. А. Мартиросян, Армения в эпоху бронзы и раннего железа, Ереван, 1964, с. 91, рис. 43-1, Т. С. Хачатрян, Древняя культура Ширака, Ереван, 1975, с. 212, рис. 124.

17 С. Г. Деведжян, Лори-Берд, II, Ереван, рис. 23а, 23б, 24, 25.

18 А. И. Джавахишвили, Л. И. Глонти, Урбнисн, вып. I, Тбилиси, 1962, табл. XXXVI.

19 A. Parrot, Nineveh and Babylon, France, 1961, p. 71, fig. 79.

20 Նույն տեղում, նկ. 179a։

21 С. А. Есаян, Древняя культура племен северо-восточной Армении, Ереван, 1976, с. 241, табл. 157; Նույնի՝ Скульптура древней Армении, Ереван, 1980, табл. 55,4. Արձանը պահվում է Հայաստանի պատմության պետական թանգարանում։

22 Բ. Ն. Առաքելյան, Նշվ. աշխ., աղ. XVII, Կ. Գ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, Երևան, 1982, էջ 113, նկ. 87։

23 Հ. Մ. Բարթիկյան, Միքայել Խալիկոսի «Ներբողյանը» և Կիլիկիայի հայոց առաջին թագավորի խնդիրը («Պատմա-բանասիրական հանդես», 1984, № 4, էջ 218)։

գավորները միաժամանակ նաև քրմապետեր էին[24]։ Ինչ վերաբերում է մեր թագի վրայի եռաթերթ շուշանին կամ լոտոսի ծաղիկին. ապա հինարևելյան շատ երկրներում դրանք համարվել են սրբազան ծաղիկներ։ Թվում է, որ հատկապես էական է դրանց եռաթերթիկությունը։ Օրինակ, հին Հնդկաստանում աճող մի քանի ծառատեսակներ, որոնք եռաթերթիկ տերևներ ունեին, համարվում էին սրբազան (aegle marmelos, butea frondosa կամ butea monosperma)։ Սրանց փայտից պատրաստում էին զոհասեղան և զանազան հմայիլներ, հատկապես երկարակեցության հասնելու նպատակով։ Դեռևս Ուրի «թագավորական» հայտնի դամբարաններում (մ. թ. ա. III հազ. կես), որ որոշ ուսումնասիրողներ համարում են քրմական, ոսկե շքեղ գլխազարդերը կազմվել են ծաղիկների ու տերևների նմանակումներից։ Հատկանշական է հատկապես Պու-աբի անունով քրմուհու կամ թագուհու գլխի հարդարանքը (աղ., նկ. 16), որի գագաթի երեք ելուստների ծայրերին ամրացված են ոսկե ծաղիկներ, իսկ գլուխը պսակում են մի քանի շարք ոսկե եռաթերթիկ և այլ տերևներ ու ծաղիկներ[25]։ Սրբազան ծառը, բույսը շումերների համար կենսական ուժի խորհրդանիշ է եղել[26]։ Այս տեսակետից հատկանշական են միջագետքյան որոշ կնիքների վրա պատկերված մարդկային կերպարանքները կամ բույս-աստվածությունները, որոնց մարմնից ու գլխից թփեր են բուսնում[27]։ Իսկ հին հնդիկների պատկերացմամբ, երբ մի ծեսի ժամանակ (ռաջասույա) թագավորին սափրում էին ու կտրում մազերը, ապա նա մարմնավորում էր հողը, բույսը, որ նորից պիտի աճի ու բերք տա[28]։ Ըստ երևույթին նման մտածելակերպի դրսևորում է մարդկային կերպարանքով թևավոր ոգու թագի վրայի շուշանը (աղ., նկ. 17), որ Դուր-Շարրուքինի (Խորսաբադ) VIII դարի պալատի քանդակներից[29] է և կամ Հայաստանի Վանի թագավորության շրջանի անթև ոգու գլխի հարդարանքը (աղ., նկ. 18)[30]։

Հայոց մեջ ծաղիկն ու բույսը պտղաբերության ու բարգավաճման խորհրդանիշ են եղել։ Հայ ազգագրության մեջ, հավանաբար, հազարամյակների խորքից է գալիս այն սովորույթը, երբ սասունցի փեսան կամ սերասուցի Մանճըլըդ գյուղի հարսնացուն իրենց գդակի և խույրի վրա զետեղում էին երեք բողբոջ («ճղա»)[31]։ Եվ պատահական չէ, որ հարսն ու փեսան էլ կոչվում էին թագավոր ու թագուհի (աղ., նկ. 19)։

Ինչպես տեսանք, Լոռի բերդի իշխանավորի ատամնավոր թագը, ոիադեմով կամ թագավորական ժապավենով հանդերձ, համապատասխանում է առաջավորասիական հին թագերի գաղափարին ու ձևերին։ Սակայն այս պատկերին պետք է մոտենալ որոշ վերապահությամբ, քանի որ այն իր տեսակի մեջ տակավին միակն է և հայտնաբերվել է խառը շերտից, թեև փորագրելու տեխնիկան բնորոշ էր այդ ժամանակաշրջանում ինչպես Հայաստանի, այնպես էլ Վրաստանի արվեստի հուշարձանների համար[32]։ Իշխանավորի պատկերը արժեքավորվում է հատկապես բեկորի վաղ բնույթի շնորհիվ, քանի որ մինչև այժմ մ. թ. ա. II հազարամյակի 1-ին կեսին պատկանող փաստական որևէ նյութ

---

24 Հ. Վարդանի. Հացունի, նշվ. աշխ., էջ 69։

25 M. E. L. Mallowan, Early Mesopotamia and Iran, London, 1965, p. 95, fig. 106.

26 Е. В. Антонова, Очерки культуры, древних земледельцев Передней и Средней Азии, М., 1984, с. 116.

27 A. Parrot, Mari capitale fabuleuse, Payot, Paris, 1974, p. 91, fig. 47.

28 В. Г. Ардзинба, նշվ. աշխ., էջ 119։

29 A. Parrot, Nineveh and Babylon, p. 70, fig. 77.

30 Sey-yare Eichler, Götter. Genien und Mischwesen in der Urartäischen Kunst, Berlin, 1984, S. 41, S. 5., Tafel 14.

31 Ա. Պատրիկ, Հայկական տարազ, Երևան, 1983, տախտ. 43, նկ. 3, տախտ. 58։

32 Э. М. Гогадзе, Периодизация и генезис курганной культуры Триалети, Тбилиси, 1972, табл. 29.

կամ տեղեկություն չկա՝ հաստատելու Հայաստանի հյուսիսային գավառներում՝ և ընդհանրապես Հայաստանում թագակիր իշխանի կամ թագավորի գոյության փաստը։ Չնայած մ. թ. ա. II հազարամյակի սկզբներից Հայկական լեռնաշխարհի հյուսիսային մասերում կատարված սոցիալ-տնտեսական և մշակութային հսկայական տեղաշարժերը, հարստության կուտակումն ու հասարակության շերտավորումը կայուն հիմք էին ստեղծել քաղաքական միավորումների առաջացման համար, մանավանդ, որ հարևան երկրներում դրանք արդեն գոյացել էին, և Հայաստանի հետ դրանց կապը բավական սերտ էր։ Այդ են վկայում բարձրաստիճան անհատների համար կառուցված Թռեղքի, Կիրովականի, Լճաշենի ու Լոռի բերդի հսկայածավալ դամբարանները՝ ճարտարապետական բարդ հորինվածքով։ Ննջեցյալների աճյունի հետ դամբարան են իջեցվել նրանց օգտագործած իրերը՝ ոսկե և արծաթե գեղարվեստորեն զարդարված սպասքը, շքեղ հագուստն ու թանկարժեք զարդերը, հմտորեն զարդարված գունազարդ և սև փայլեցրած խեցեղենը, զենքերը՝ կառքերով ու զոհված կենդանիներով հանդերձ։

Այսպիսով, բեկորի վրա պատկերված է իշխանավորի, ավելի ճիշտ թագավորի գլուխ, որը հիմք է տալիս խոսելու մ. թ. ա. II հազարամյակի 1-ին կեսին հյուսիսային Հայաստանում գոյություն ունեցող քաղաքական միավորումների մասին։ Նրա թագը ոչ միայն աղերսվում է հինարևելյան իշխանավորների թագերին ու խույրերին, այլև սերտորեն կապվում մեզ քաջ ծանոթ հայկական թագին, մատնանշելով նրա ծագման բուն ակունքները։

ИЗОБРАЖЕНИЕ ВЕНЦЕНОСНОГО ВЛАСТИТЕЛЯ ИЗ ПОСЕЛЕНИЯ ЛОРИ-БЕРД ЭПОХИ БРОНЗЫ

СЕДА ДЕВЕДЖЯН

Резюме

В поселении Лори-Берд эпохи бронзы (близ г. Степанаван) был обнаружен небольшой фрагмент среднебронзовой керамики, на котором выгравировано профильное изображение головы человека, увенчанной короной с шестью острыми зубцами, сверху помещен трилистник. Охватывающая лоб лента завязана на затылке и спускается до заштрихованной шеи. Бесспорно, что на фрагменте изображено высокопоставленное лицо—военный предводитель, князь или же верховный жрец. В пользу последнего свидетельствует особенно трилистник или цветок лотоса, который является характерным атрибутом жреческого сословия. При этом, разумеется, не исключено, что изображенный занимал высокое общественное положение и обладал светской властью.

Приблизительно сходные венцы и головные уборы встречаются в памятниках искусства III—I тыс. до н. э.—на изображениях древневосточных царей, божеств, духов, военачальников, представителей жречества. Корона на керамическом фрагменте из Лори-Берда увязывается как с коронами на каменных статуях Армении начала I тыс. до н. э., так и с коронами Ахеменидов и Арташесидов.

Находка говорит о существовании в первой половине II тыс. до н. э. на севере Армении политических образований (для которых имелись достаточные социально-экономические предпосылки) и одновременно указывает на истоки иконографии армянской тиары.